



Հոգեւոր Աստվածութեան Արեւոյն ՀԱՄԱՐ
"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France
7, Rue Papère, MARSEILLE

(Ը. Տարի) ԱՊՐԻԼ 1932

(8^{me} Année) Avril 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐՉՈՒՄԸ

ԳՈՐԾԷ՝ ՄՇԱԿ

Հոգ. Կեանք

ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Է

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Շնորհաւոր Մովսէս

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԷ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

Կենսագրական

ՕՊԸՐԼԻՆ

Ս. ԳԻՐԲԸ ԵՒ ՔԱՂԱՔ. ԹԵՐԹԵՐԸ

Մանկանց սիւնակ

ՍԱՄՈՒԷԼ

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Ազատ Թարգմ. Ն. Մ.

Թրգ. Վեր. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ

ԱՐԱՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

X X X

Թրգ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերները եւեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկա միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ չ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերները երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Իւրաքանչիւրն
ունի իր խմբագրական մարմինը: Երկուքն ալ կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն գուրս):
Անոր պատասխանատու խմբագիրն է՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Մարսէլ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ եւ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր քովանդակութեամբ: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցով մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:—

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է
եւ կանխիկ:

— ԲԱԺՆԵԴԻՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Թերթիս խմբագրութեան, հետեւեալ կերպով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

ԲԱՆԲԵՐ

Արժնյի՛ր դուն
որ կը յնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1932

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Մինչ անոնք կը նայէին, (Յիսուս) համբարձաւ,
եւ ամպ մը զԱնիկա անոնց աչքերէն առաւ:

Գործ. Ա. 9

Յարութեան մեծ իրողութիւնը այլեւս պատ-
մութեան կը վերաբերէր: Աշակերտներու արտ-
մութիւնը կրկին ուրախութեան փոխուած էր:
Անցեալ քառասուն օրերուն մէջ, ըլլայ անհա-
տապէս կամ հաւաքաբար, Պետրոսէն սկսեալ
մինչեւ հինգ հարիւրը յաճախ տեսած էին իրենց
Տէրը: Այս տեսութիւնները եւ Անոր հետ ունե-
ցած խօսակցութիւնները իրենց վրայ տիրող մղ-
ձաւանջը արդէն փարատած եւ զանոնք նոր տը-
րամադրութիւններով օժտած էին:

Առաջին առթիւ մեր մտքին մէջ երկու հար-
ցեր կը ծագին. —

Ա) Ինչո՞ւ Տէրը Իր յարութենէն անմիջապէս
յետոյ՝ կամ ուղղակի գերեզմանէն չհամբարձաւ,
հապա քառասուն օր մնաց այս աշխարհի վրայ:

Պատճառները կը խորհինք թէ զանազան
էին: Նախ Դեթեմանի պարտէզին մէջ յուսա-
խարութեան մատնուած եւ ցիրուցան, նոյնիսկ
զինքն ուրացող աշակերտները հարկ էր կրկին
ի մի հաւաքել, հաստատել, որբել, Սբ. Հոգիով
լեցնել եւ անոնց միտքը բանալ Իր մահուան
արժէքը հասկցնելու, որ Իր միաբնակից կորիզը
կը կազմէր: Յայտնի է թէ համբարձումէն առաջ
այս տեսութիւնները եթէ չըլլային, հարցական
է թէ քանի՞ աշակերտ հաւատարիմ պիտի մնար
եւ քանի՞նք հետզհետէ թո՛ղմասին պէս պիտի
ըսէին քանի որ չտեսայ, չեմ հաւատար: Նաեւ
անոնց որ հաւատքի մէջ մնացած էին, որքա՞ն
դժուար պիտի ըլլար, բացատրել աշակերտներու
եւ աշխարհի թէ Յիսուս յարութիւն առած է, Աս-
տուծոյ խօսքին համաձայն, «Իմ անձ» գերեզ-

մանին մէջ պիտի չթողուս, եւ Քու Սուրբիդ ալ
պահանութիւն տեսնել պիտի չտաս» Սաղ. ԺԶ. 10:

Ապա Իր յարութեան զօրութիւնը հասկցնելու
էր անոնց: Աշակերտները գիտէին թէ կայ յա-
րութիւն մը վերջին դատաստանին, բայց խա-
չելութենէն առաջ Իր մահուան եւ յարութեան
մասին ըրած խօսքերը բոլորովին օտար կուգա-
յին իրենց, բայց անոնք պատրաստուելու էին
Պետեղհոստէի օրուան, որպէսզի զօրութիւն առ-
նելով վկայէին ո՛չ միայն մարդկութեան մեղքին
համար մեռնող Փրկչին, այլ նաեւ Յարուցեալին
վրայով, որ կենդանի էր, կ'ապրէր եւ խոստում
տուած էր ապրեցնելու բոլոր Իրեն հաւատացող-
ները: Արդ, իրենք վկայ ըլլալու էին թէ մարդ-
կութիւնը խաչեալ վարդապետի մը չէր որ պի-
տի հաւատար, այլ յարուցեալ Տէրոջ մը:

Նաեւ աշակերտներուն միտքը դեռ բոլորովին
զոց էր միսիոնարական մեծ գաղափարն հասկը-
նալու: Տէրը Ինք Իսրայէլի կորստուած ոչխարնե-
րուն համար եկած էր, բայց անոնց ցոյց տալու
էր թէ անոնց գործունէութեան դաշտը ամբողջ
աշխարհն էր, վասնզի յարուցեալ Քրիստոս այլ-
եւս ամբողջ աշխարհին Փրկիչն էր, ուստի ի-
րենք ճանչնալու էին զԱյն իբր այն և հասկնա-
լով իրենց պարտականութիւնը որպէս Աւետա-
րանիչներ, ճանչցնելու էին զԱյն նաեւ աշխարհի:

Արդ, Յիսուս այդ քառասուն օրերուն աշխար-
հի մէջ մնալով առաքեալներուն հաւատքը հաս-
տատեց եւ զօրացուց, անոնց միտքերը լուսաւո-
րեց Սբ. Հոգին տալով, որպէսզի հասկնան ինչ
որ Իր մահէն առաջ ըսած էր: Այս կերպով ան-
ոնք գիտակից գործակիցներ պիտի ըլլային:

Բ. Ինչո՞ւ ինքզինքը միայն իր աշակերտ-
ներուն յայտնեց եւ ո՛չ թէ աշխարհի ալ:

«ԳՈՐԾԷ՛Ն՝ ՄՇԱԿ»

«...Բանեցուցէք (ձեր տաղանդները) մինչեւ Ես գամ...»:
Դու. ԺԲ. 13

«Ջոնքի մէջ թուլտարտ չըլլաք, Հոգիով բորբոքեցէք, Տէրոջը ծառայեցէք»:
Հո. ԺԲ. 11

I

(Անպատու մշակներ)

Ես կը ճանչնամ ձեռնխուսի, ես մեծատենչ եղբայրներ Որոնք իրենց մեղաւոր անկիւններուն մէջ մռայլ,
Դեռ պատրոյգ մը չլաւած, հիւսած են մեծ երազներ...
Ես ամէն օր կը կրկնեն նոյն յանկերգը անալլալ:—

«Տէ՛ր, հողմակոծ ծովերու լանջքին ցցո ող երկնառաք Բարձունքներու մշտալու փարոս մ'ըլլալ կը տենջանք,
Ու կեանքէն մահ շտապող խեղճ հոգիներն անճրագ՝
Փրկել կ'ուզենք մեղքի խոյ յորձանքներէն մահերանգ»:

Ես ուրիշներ կը պօռան, «Տէր, դեռ անգործ կը մընանք,
Մինչդեռ հեռուն լայնարձակ դաշտեր կան մոռ ես խապան
Օ՛հ զրկէ մեզ, զի գործիդ մշակ ըլլալ կը ցանկանք.
Կ'ուզենք անխնայ աշխատիլ ու քերել հունձք մ'աննրման:

«Հեռո՛ւն, հեռո՛ւն մեզ զրկէ...» կը յանկերգեն ամէն օր,
Մինչդեռ իրենց յանձնուած ափ մը հոյր անմշակ,
Անէծքի տակ տառապող, խեղճ վիճակով մ'ափառը՝
Կը մընալ միշտ անպատու, Սողոմի պէս աւերակ...

II

(Հաշուեպահանջ)

Արդ, ոսկն դրէք, ու զժգոհ ես անվաստակ ծառաներ,
Գործատիրոջ ճշմարիտ ես անաչառ պատգամին:—
«Ձեզմէ՛ տմէն մէկուն ես չյանձնեցի՝ տաղանդներ,
Ես ձեր ուժին համաձայն գործի դաշտեր թանկագին:

«Է՛հ ուրեմն ինչո՞ւ. դեռ սա անկիւնին մէջ անլոյս,
Հազարաւոր մեծահար ես աջալուրի հոգիներ՝
Լոյսի կարօտ կը մեռնին, մի՛շտ անճրագ, մի՛շտ անլոյս
Առանց երեք գոնելու խԱՉԵԱԼ ՓՐԿԻԶՆ կենսաքեր:

Ու դեռ ինչո՞ւ իր բաղդին լքուած դաշտի մը հանգոյն՝
Սա քերթի հողն անտեսուած կը մնայ միշտ անխնամ.
Մինչ դուք ի վուր կ'որոնէք սին երազներ վարդագոյն,
Ծառաներու պէս՝ որոնք թող են ես մեղի ես անկամ:

(1) Ես քեզի հետ կողք կողքի գործատան մէջ աշխատող
Ընկերներուդ գէթ օր մը փրկչին վրայ խօսե՛ցար:
Անոնք կրցա՞ն կեանքիդ մէջ տեսնել Յիսուս առկնքնող,
Որ փրկելէ վերջ կրնայ փոխել ես կեանք մեղաւոր:

«Ի՞նչ բանի մէջ ու՛ մշակ, հաւատարիմ չեղողին,
Ինչպէ՛ս կրնամ վստահիլ աւելի մեծ քաղաքներ:
Դեռ դրացւոյդ չպատմած Աստուծոյ սէրն երկնային,
Ինչպէ՛ս կրնաս երազել անթիւ օտար հոգիներ:

III

(Լուրջ յորդորներ)

2) «Բայց քանի որ աշխատանքի ժամն անցած չէ տակաւին
Ե՛լ Թօթափէ արցունք, երազ ես տրտունջներդ անտեղի:
Արցունքն՝ յաճախ տկարութիւն, երազն ցնորք մ'է ու սին
Իսկ տրտունջը՝ հոգիներու մահացու թոյնն է լեղի...

«Արդ ուրք ելիր, մէջքդ սնդէ, ուխտաւորսիր խաչիս տակ
Ես ինչպէ՛ս ես քեզ սիրեցի, ծառայեցի ու մեռայ...

Նոյն հոգիով դուն ալ շուրջդ որպէս անձնուրաց մշակ՝
Հերկէ՛ ցանէ՛ կեանքիդ համակ ծառայութիւն թող դառնայ

Գործէ մշակ, զոհէ զոհուիր զի փախչող մէն մի վայրկեան
Աստուածատուր պատեհութեան մասնիկներն են թանկագին
Որոնք կրնան միջոց դառնալ հոգիներու փրկութեան.
Վայրկեաններ կան որ դարերու վրեժն արժէք ունին...

«Ջոնաթան մէջ որոնէ հաճոյքներդ բարձրագոյն,
Ձի մահապարտ մարդկութիւնը հերոսներու պէտք ունի,
Որոնց կեանքը անձնուրացման մարմնացումն է գերագոյն
Ես որոնց սիրտն այլոց վէրքին համար միայն կ'արիւնի...

Վերջին խօսք մ'ալ, Արթուն կեցիր ծունկի վրայ, սիրոյ մէջ՝
Ես նախ ապրէ, ապա գործէ, յետոյ խօսէ ամենուն.
Յայնժամ կեանքդ պիտի դառնայ փրկարար լոյս մը անշէջ
Դուն՝ սը. մշակ, ես ժամանակդ ոռոգած դաշտ մը բեղուն:

IV

(Վարձատրութիւն)

«Ու տես, ահա արեւելքը բոսոր վարդի մը հանգոյն
Կ'այգեկոծի՝ վարձատրութեան օրուան ցոլքէն փառաւոր:
Ես կ'արտօրամ, ու չսպասուած վայրկեանի մը մէջ թաքուն
Պիտի ժողվեմ հաւատարիմ իմ մշակներըս բոլր:

«Բայց վա՛նի իրիող մշակներուն որ երազով կ'արբենան.
Անոնք յանկարծ լաւահառաչ հինգ կոյսերուն պէս յիմար՝
Պիտ' ուշքի գան զարհուրելի խառարին մէջ անվախճան.
Ու շնորհքի դուռն արդէն փակ պիտի գտնեն դարէ դար...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօնա

(1) Այս տունէն սկսեալ հարցաքննութիւնը եւ թե-
ւադրութիւնները անհատներու ուղղութեամբ պատճառաւ
եղանկի գործածութիւնը գրական սխալ կամ թերութիւն
մը չէ:

(2) Ա եւ Բ մասերուն տողերը 14 վանկ ունենալով,
ընթերցողը 4-3, 4-3 տողով պէտք է կարդայ, իսկ Գ եւ
Դ մասերուն տողերը 15 վանկ ունենալով 4-4-4-3 տողով:
Այս դիտողութիւնները գրեցի որ չըլլայ թէ ոեւէ մէկը
կտորին մէջ գծուաբութեան մը կամ անկանոնութեան
մը հանդիպի: Աղօթքով Ս. Պ.

ՀՈՒ. ԿԵԱՆՔ

ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Է

Ի՞նչ է զօրութիւնը: Ի՞նչն է որ տկար քրիստոնեայ մը զօրաւոր քրիստոնեայի մը կը վերածէ:

Արդ, Սուրբ Հոգին ամէն հաւատացեալի մէջ կը բնակի, քանզի «Եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, անիկա Անորը չէ» Հռով. Ը. 9: Սակայն ամէն հաւատացեալ զօրութեամբ լեցուած չէ: Հարկւր քսան հաւատացեալները ի՞նչ ստացան ուրեմն Պէնտէկոստէի օրը:

Սուրբ Հոգին Աստուածութեան երբորդ անձնաւորութիւնն է: Աստուած է: Մենք չենք կրնար զԱստուած շատ կամ քիչ ունենալ: Ուրեմն զօրութիւնը մեզի զալու է ոչ թէ մեր աւելի մեծ քանակութեամբ Հոգի ստանալով, այլ Սուրբ Հոգիին թուաւորելով որ աւելի մեծ չափով տիրանայ մեզի: Սուրբ Հոգիով լեցուիլ, կը նշանակէ ինքզինքնիս բոլորովին Անոր յանձնել որպէսզի առանց որեւէ արգելքի, «Բաժանորդ ըլլանք անվախճան կեանքին զօրութեան» (Եբր. Է. 16): Նուիրել կը նշանակէ ձեռքը լեցնել: Ուրեմն ինքզինքնիս Աստուծոյ նախիրել կը նշանակէ ձեռքերնիս Աստուծոմով լեցնել: Ու երբ ձեռքերնիս Աստուծոմով կը լեցնենք, մենք կը լեցուինք Սուրբ Հոգիին զօրութիւնով:

Շատ մարդիկ կը խորհին թէ իրենք երկրորդ օրհնութեան մը կը կարօտին, սակայն անոնց իրապէս պէտք եղածը խառն յօրհնութիւնը հասկնալն ու Քրիստոս Յիսուսով իրենց ըստացածը ճանչնալ ու իւրացնելն է», կ'ըսէ Տօք. Սթուրթ Զօլարն:

«Իմ շնորհքս հերիք է քեզի», ըսաւ մեր Տէրը Պօղոսին: Այո, «Տէր Յիսուսը բաւական է: Միայն անոնց բաւական չէ որ զԱյն կատարելապէս եւ բոլորովին չեն ընդգրկել»: Այո էր բարեպաշտ թէքսթէկընի վկայութիւնը:

Ուրեմն զօրութեամբ լեցուած քրիստոնեան ուրիշներէ աւելի Սուրբ Հոգիով լեցուած քրիստոնեայ մը չէ, այլ քրիստոնեայ մըն է որ կը թուաւորէ Սուրբ Հոգիին կառավարել իր ամբողջ կամքը, զգացումները եւ փափաքները: Շատ մը քրիստոնեաներ Սուրբ Հոգիին յաւէտ առանձնաշնորհեալ բանտարկեալի մը տեղը կուտան իրենց սիրտերուն մէջ, քան թէ Վեհապետի մը Տէրոջ մը կամ Թագաւորի մը:

Սուրբ Հոգին չգար ինծի իբրեւ զօրութիւն մը զոր ես զործածելու արտօնութիւնը պիտի վայելեմ, այլ իբրեւ զօրութիւն մը որ կը բաղձայ

զիս զործածել: Մենք կ'աղօթենք, կ'սպասենք, կ'ըղձանք որ Աստուած մեզի աւելի տայ, սակայն Անիկա կ'սպասէ որ մենք զմեզ եւ մեր ամբողջ ունեցածը իրեն յանձնենք եւ իր զործածութեան տրամադրենք:

«Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ». կ'ըսէ Քրիստոս: Ամէն իշխանութիւն Անորն է եւ Անիկա կը փափաքի իր իշխանութիւնը ցուցնել իմ մէջն եւ իմ միջոցովս:

Վերջնական ընտրութիւնը իմ կամքէս կախեալ է: Ես որոշելու եմ թէ Սուրբ Աստուծոյ զօրութիւնը պիտի սահմանափակեմ թէ պիտի թողում որ «Տէրոջը խօսքը յառաջանայ եւ փառաւոր ըլլայ» (Բ. Թեա. Բ. 4): Արդ, վերին զօրութեանը ինչ ըլլալը եւ ինչպէս յայտնուիլը հասկընալը ամենակարեւոր հարց մըն է:

Միթէ անհամար չեն այն քրիստոնեաները որ բոլորովին յուսախար եղած են իրենցմէ ե իրենց հոգեւոր վիճակէն: Շարունակ կ'աղօթեն, երբեմն 30, 40, 50 տարի որ Սր. Հոգիով լեցուին սակայն կ'ստիպուին խոստովանել թէ երբեք չեն ստանար իրենց խնդրած օրհնութիւնը: Անոնք շատ անգամ բարի զործերով լեցուն են, սակայն «ամէն բարի զործերու մէջ պտղաբեր» չեն, քանզի «Աճեցուն չեն Աստուծոյ զիտութիւնովը» (Կող. Ա. 40):

Արդեօք ինչի՞ կ'սպասեն: Ի՞նչ կը փնտռեն: Անգամ մը վերնատան դարձնենք մեր երեւակայութեան աչքերը: Շատ կանուխ է: Աշակերտները կանուխ հաւաքուած ըլլալու էին աղօթելու, քանզի զօրութիւնը առաօտեան ժամը 9ին ատենները արդէն իջած էր եւ անոնք Երուսաղէմի փողոցներուն վրայ քալելով բոլոր մարդոց զգալ կուտային զօրութեան արտայայտութիւնը:

Զօրութիւնը յանկարծ եկաւ միաբնոյն սպասող համայնքին վրայ: «Եւ յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս, եւ բոլոր տունը լեցուց ուր նստեր էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց որպէս թէ կրակէ, եւ ամէն մէկուն վրայ նստաւ: Եւ ամէնն ալ Հոգւով Սրբով լեցուեցան, ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կուտար» (Գործ. Բ. 2-4): Զօրութիւնը իջած էր:

Արդեօք Տէր Յիսուս երկինքէն Սուրբ Հոգին անոնց վրայ կը փչէր կրկին ինչպէս որ ատկէ առաջ նոյն վերնատան մէջ ըրած էր ըսելով, «Առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի. 22): Քանզի այս հովը սովորական հով մը չէր: Այնպէս կ'երեւի թէ զուրար զանազան բազմութիւնը լսեց ձայնը (հա-

մար 6): Թերեւս տունը շարժեցաւ (Տես Գործոց Դ. 31):

Զօրութեան իջած ըլլալուն մասին տարակուսիլ կարելի չէր: Պետրոս առաքեալ խնդիրը բացատրեց բազմութեան ըսելով, «Յիսուս Աստուծոյ ալ ձեռքովը բարձրանալով, ու Հոգւոյն Սըրբոյ խոստմունքը Հօրմէն առնելով՝ տարածեց ասիկա զոր դուք հիմա կը տեսնէք եւ կը լսէք»:

Անոնք ի՞նչ տեսան: Ի՞նչ լսեցին: Ի՞նչ էր զօրութիւնը: Ծիշող նոյն աշակերտները ժամ մը առաջ Քրիստոսի համար վկայելու յարմարութիւն չունէին: Հիմա վկայելու յարմարութիւնը ունին եւ իրենց վկայութեան իբրեւ հետեւանք զօրաւոր արթնութիւն մը յառաջ կուգայ այն քաղաքին մէջ որ թշնամական հոգի կը կրէր Յիսուսի դէմ:

Զօրութեան պարզեւին միջոցով աշակերտներուն վրայ տեղի ունեցած տարբերութիւնը ի՞նչ էր: Այդ տարբերութիւնը չէր կրնար համարձակութիւն կոչուիլ:

Աշակերտները, անտարակոյս 120ն ալ, այդ օրէն առաջ յաճախ քարոզած եւ համարձակութեամբ քարոզած էին, սակայն Սուրբ Հոգին անոնց քարոզներէն ոչ մէկը, նոյն իսկ անոնց քարոզներէն ոչ մէկին կմախքը արձանագրելու արժանի նկատած էր, մինչ Սուրբ Հոգիով լեցուելէն վերջ՝ Պետրոսի քարոզը ընդարձակօրէն հաղորդել կուտայ մեզի: Անոնք Պէնտէկոստէէն առաջ դարձի եկած այրեր եւ կիներ էին: Անոնք Պէնտէկոստէէն առաջ մաքուր էին այն խօսքով զոր Քրիստոս խօսած էր իրենց (Յովհ. ԺԳ. 3), սակայն հիմա տարբեր մարդիկ էին, զօրութեամբ լեցուած մարդիկ էին: Մենք ալ կրնանք աշակերտներ եւ փրկուած մարդիկ ըլլալ, սակայն ծառայելու անյարմար՝ հակառակ անոր որ պատրաստ ըլլանք Տէրոջը ծառայութեան համար որեւէ աշխատանք չխնայելու: Վերէն զօրութեամբ չլեցուած որեւէ անհատ յարմարութիւն չունի Աստուծոյ ծառայելու:

Արդ եթէ այս անհրաժեշտ պարզեւը ստանալու կը ձեռնարկենք, ի՞նչ է մեր ակնկալելիքը. սաստկաշունչ հո՞վը, տանը շարժի՞լը, կրակէ լեզուները, թէ տարբեր լեզուները: Ասոնք արդեօք միշտ կ'ընկերանան զօրութեան պարզեւին: Ասոնք արդեօք նոյն ինքն զօրութիւնն են:

Ասիկա ամենակարեւոր հարց մըն է, քանզի շատ մը լուրջ անհատներ կը յայտարարեն թէ, ոչ մէկը կարող է Սուրբ Հոգիով լեցուիլ, առանց լեզուներ խօսելու պարզեւը ստացած ըլլալու:

Ամէն բանէ առաջ չմոռնանք թէ սաստկաշունչ հոգին ձայնը, կրակէ լեզուները, տարբեր լեզուներ խօսելու պարզեւը եւ տան շարժիլը ընկերացան միայն վերէն իջած զօրութեան: Անոնք վերէն յայտնուած զօրութիւնը ուշագրաւ ընկելու նշաններ էին լոկ եւ ինքնին զօրութիւնը չէին ներկայացներ: Աստուած կարող էր անոնցմէ ոմանք, կամ նոյն իսկ բոլորն ալ զանց ընել, ինչպէս որ այսօր յաճախ կամ ընդհանրապէս կ'ընէ: Այս կարգի նշաններ կրնան այսօր տըրւիլ կամ Հտրուիլ: Ուրիշ լեզուներ խօսելու պարզեւը երբեք ապացոյց չէ զանոնք խօսողին Սբ. Հոգիով լեցուած ըլլալուն: Ոչ ալ նուիրուած քրիստոնեայի մը երբեք տարբեր լեզուով խօսած չըլլալը ապացոյց է անոր Սբ. Հոգիով լեցուած չըլլալուն: Այս տողերը կարգացողներէն շատերը թերեւս չհասկնան թէ ինչի վրայ կը խօսինք: Թերեւս տեղեկութիւն չունին թէ կարգ մը մարդիկ կան որ այսօր ուրիշ լեզուներով կը խօսին: Այսու հանդերձ ասիկա հարց մըն է որ շատ սրտի ցաւի եւ հակաճառութեան պատճառ կ'ըլլայ: Վիճարանութեան չենք ուզեր մտնել, սակայն հարկադրուած կ'զգանք զգուշացնել լուրջ վրտանգէ մը որ կարելի է ծագի:

Ուրեմն թուլատրեցէք որ համառօտ պատասխան մը տանք հետեւեալ հարցումին, Այս նշանները միշտ կ'ընկերանան Սուրբ Հոգիին Զօրութեան պարզեւին: Անմիջապէս եւ զօրաւոր շեշտով «ՈՉ» պիտի պատասխանենք այս հարցման:

«Սաստկաշունչ հոգ մը եղաւ»: Երբ մարդ վերէն զօրութեամբ կը լեցուի, շատ անգամ այնպէս կ'զգայ թէ նոյն ինքն Աստուծոյ շունչը կը փչէ իր վրայ: Այս էր Չարլզ Ֆինիի փորձառութիւնը: Սուրբ Հոգիով մկրտուիլը նկարագրելով կ'ըսէ, «Սուրբ Հոգին այնպէս իջաւ վրաս որ կարծես թէ ամբողջ էութիւնս, մարմինս ու հոգիս թափանցեց: Ելեքտրական հոսանքի մը նման անցաւ մէջէս եւ սիրոյ ալիքով մը լեցուց զիս: Այնպէս զգացի թէ Աստուծոյ շունչը կը փչէր վրաս եւ մեծ թեւերով կը հովահարէր զիս»: Կան սակայն շատ մը քրիստոնեաներ որ անտարակոյս վերէն զօրութիւն ստացած են, բայց երբեք նմանօրինակ փորձառութիւն մը ունեցած չեն: Աստուած միեւնոյն մէթոտը չզործածեր երբեք: Հոգին կը ներգործէ եւ «ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ ինչպէս կ'ուզէ: (Ա. Կորնթ. ԺԲ. 13):

Կրակէ լեզուներ: Ոչ ալ Սուրբ Հոգիին պարզեւը ստացողներուն գլուխներուն վրայ շարու-

նակ կրակէ լեզուներ կ'երեւնան: Եթէ կան այնպիսիներ, շատ քիչ է անոնց թիւը որ կ'ըսեն թէ կրակէ լեզուները անհրաժեշտ նշաններ են Սուրբ Հոգիին ստացման: Այդ երեւոյթը տեղի չունենար այլեւս, կամ թէ խիստ հազուադէպ է: Քսան տարիի չափ առաջ լսեցի թէ Հնդկաստանի մէջ աղօթող խմբակի մը գլուխներուն վրայ կրակէ լեզուներ երեցած են եւ տեսնողները սարսափահար: Չուր բերել եւ կրակը մարեւոլ վազած են: Նոյն իսկ եթէ այս կարգի երեւոյթ մը տեղի ունենայ այսօր, եւ կրնայ պատահիլ, խիստ հազուադէպ ըլլալու է: Ամէն Սուրբ Հոգիով լեցուած անհատի փորձառութիւնը չէ ասիկա:

Կ'երեւի թէ Պէնտէկոստէին օրը կրակէ լեզուները եւ սաստկաշունչ հովը զրկուեցան որպէսզի այն 120 աշակերտները վստահ ըլլային թէ Սուրբ Հոգին իջած էր, ինչպէս որ անկէ յետոյ երբ աշակերտներէն ոմանք երբ համարձակութիւն կը խնդրէին, «Շարժեցաւ այն տեղը ուր ժողովուած էին» (Գործ. Դ. 31):

Ուրիշ լեզուներ խօսիլ: Զարմանալի է որ թէպէտ մարդիկ կ'ընդունին թէ սաստկաշունչ հովը, տանը շարժումը եւ կրակէ լեզուները Սուրբ Հոգիին պարզելին ստացման անհրաժեշտ երևոյթներն են, սակայն կարգ մը նուիրուած, բայց սխալած մարդիկ մեզի կ'ըսեն թէ չենք կրնար Սուրբ Հոգիով լեցուիլ առանց ուրիշ լեզուներ խօսելու: Սուրբ Հոգիով եւ գորութեամբ մկերտուած հաւատացեալներու ընդարձակ մեծամասնութիւնը երբեք լեզուներ խօսելու պարգեւը ստացած չէ եւ թերեւս բնաւ պիտի չստանայ ալ, ոչ ալ ստանալու պէտք ունի: Նոյն ինքն Պողոս առաքեալ պատասխանեց այս հարցման ըսելով, «Միթէ ամէնը առաքեալներ են, միթէ ամէնը մարգարէներ են, միթէ ամէնը լեզուներ կը խօսին» (Ա. Կոր. ԺԲ. 29, 30): Ոչ, նոյն իսկ Սուրբ Հոգիով լեցուած հաւատացեալներ ուրիշ լեզուներով չեն խօսիր: Սակայն Սատանային ջանքն է Քրիստոսի գործը նախատինքի առարկայ ընել եւ Անոր հետեւողներուն մէջ կասկածներ եւ բաժանումներ յառաջ բերել:

Հրաշագործութեան պարզելին բաղձալու պէտք չունինք: Պէտք չունինք ցանկալու Մովսէսի զաւազանին, Եղիայի վերարկուին, Դաւիթի քնարին, Սողոմոնի իմաստութեան կամ Պէնտէկոստէի լեզուներուն: Յովհաննէս Մկրտիչ թէպէտեւ իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով մկերտուած էր, սակայն հրաշքներ չգործեց: Բայց ուրիշներ որ Քրիստոսի անունը դաւանելով հրաշք-

ներ գործեցին, «Անօրէնութիւն գործողներ որակուեցան եւ Սուրբ Հոգիին գորութեան անտեղեակ գտնուեցան: Եթէ Սատանան կրնայ մարդոց կարողութիւն տալ շատ մը հրաշքներ գործելու, կրնայ նաեւ անոնց դիւրութեամբ ուրիշ լեզուներ խօսիլ տալ: Անոր համար դիւրին է սրբւէ լեզու խօսիլ: Ուրեմն մէկի մը նոյն իսկ ուրիշ լեզուներ խօսիլը չապացուցաներ երբեք թէ անիկա վերէն գորութեամբ լեցուած է:

Պէնտէկոստէի օրը լեզուներ խօսիլը անհրաժեշտ էր որպէսզի աշխարհի ամէն կողմէն Երուսաղէմ լեցուած բազմութիւնը համոզուէր թէ իրապէս Սուրբ Հոգին թափուած էր եւ որպէսզի երկիրքին տակը գտնուող ամէն ազգ ներկայացնող ժողովուրդը հասկնար օրուան պատգամը. տպագրութեան պիտը անծանօթ էր տակաւին:

Կոռնելիոսի տանը մէջ այս հրաշքը կրկնուեցաւ: «Անոնք լեզուներ խօսեցան եւ զԱստուած փառաւորեցին», սակայն հոն ալ այդ երեւոյթը հարկաւոր էր ցուցնելու համար թէ Հեթանոսներուն վրայ ալ Սուրբ Հոգիին պարգեւ թափուած էր: «Ինչպէս առաջուընէ մեր վրայ ալ» Գործոց ԺԱ. 45: Անոնց Պէնտէկոստէն ալ նոյնչափ ազդեցիկ էր եւ կատարեալ որչափ Հրեաներունը: Պետրոս առաքեալը ինքնին պէտք ունէր այս երեւոյթին նոյն ճշմարտութեան համոզուելու եւ ինքզինքը առաքեալներուն ու եղբայրներուն անարդար քննադատութեան առջեւ արդարացունելու (Գործ ԺԱ. 8-18): Եթէ այն հեթանոսները լեզուներ խօսած չըլլային, Պետրոս իր Երուսաղէմ գտնուած եղբայրներուն եւ պաշտօնակիցներուն ի՞նչ ապացոյց պիտի բերէր Սուրբ Հոգիին իրապէս անոնց վրայ իջնելուն: Սակայն միեւնոյն երեւոյթներուն ակնառես ըլլալով կարող էր ժողովին առջեւ կայնիլ եւ ըսել, «Ես ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ դէմ դնել»:

Երբ Սուրբ Հոգին Սամարացոց վրայ իջաւ, լեզուներու պարգեւը Հիշուի (Գործ. Ը. 17): Նոյնիսկ Պողոս առաքեալի օրերը հարկ եղաւ ըզզուշացնել մարդիկ այս շատ վիճաբանութիւններու առարկայ եղող լեզուներ խօսելու պարգեւէն (Ա. Կոր. ԺԴ.): Այսօր ալ աւելի կը կարօտինք այս զգուշացման: Պողոս կ'ըսէ, «Եկեղեցիին մէջ կ'ուզեմ հինգ խօսք մտաւորութեամբ խօսիլ... քան թէ բիւրաւոր խօսքեր լեզուով»:

(Շար.)



ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

(Թարգ. Անգղիարէնէ)

Զաւակս, Իմ վրայովս շատ գիտնալ պէտք է, շատ սիրել բաւ է: Մանուկը ինչպէս մօրը հետ կը յարաբերի, դուն ալ նոյնպէս Ինծի հետ յարաբերէ: Ուրիշներու հետ յարաբերելու ատեն իրենց անձերը մոռցողները կը սիրեմ:

Մէկուն համար աղօթե՛լ կ'ուզես, անունը ըսէ եւ անոր նկատմամբ խնդրուածքդ ըրէ: Ինծի յիշէ այն աղքատները որոնց օգնել կ'ուզես, այն հիւանդները որոնց տեղը նեղուիլ կ'ուզես, այն մեղաւորները որոնք Ինծի բերել կ'ուզես, անոնք որ քեզմէ պաղած են ու սիրաշահիլ կ'ուզես:

Քու անձիդ համար խնդրելու շնորհքներ, օրհնութիւններ ունի՞ս. ցանկ մը շինէ ու Ինծի կարդա: Քու հպարտ, դիւրագրգիռ եւ ինքնահաւան ըլլալդ Ինծի ըսէ պարզ կերպով ու մի՛ ամչնար: Յիսուս Քրիստոսով ննջող սուրբերն ալ որ երկինքն են հիմա, նոյն յանցանքներն ունէին, սակայն աղօթքով շակուեցան: Ֆիզիքական մտաւորական եւ հոգեկան օրհնութիւններ Ինծմէ խնդրելէն մի քաշուիր, ամէն բան տալու կարող եմ, մանաւանդ միշտ պատրաստ եմ զօրութիւն տալու անոր որ աւելի բարի ապրելու փափաք ունի:

Զաւակս, այսօր ի՞նչ բանի կը կարօտիս: Երանի՛ թէ քեզի օգնելու փափաքս գիտնայիր: Քեզ պաշարող հոգե՞ր ունիս, անոնք Ինծի բեր: Քու թերութիւնդ Ինծի բեր ու անոնց պատճառները պիտի ցուցնեմ քեզի:

Մայրդ, ընտանիքդ կամ դրացիդ ուրախացնե՛լ կ'ուզես, ըսէ Ինծի: Իմ վրաս նախանձաւորութիւն չունի՞ս, եւ չե՞ս ուզեր օգնել անոնց որ գուցէ Զիս մոռցած են: Նեղութիւններ չունի՞ս, ո՞վ վշտացուց քեզ. ամէն բան Ինծի պատմէ ու ամէն բան պիտի մոռնաս. քեզ պիտի չթողում:

Ինծի յայտնելու ուրախութիւն մը չունի՞ս, ինչո՞ւ չես թողուր որ քու ուրախութեանդ մասնակից ըլլամ: Երէկուքնէ ի վեր քեզ ուրախացնող կամ մխիթարող բան մը չէ՞ պատահած, Ինծի պատմէ: Սիրելի այցելութիւն մը, յանկարծակի վախէ ազատում մը, անակնկալ յաջողութիւն մը, սիրոյ արտայայտութիւն մը, այս բոլորը քեզի համար Ե՛մ պատրաստած եմ: Անոնց համար Ինծի շնորհակալութիւն յայտնել չե՞ս ուզեր:

Որոշա՞ծ ես որ այս միեւնոյն փորձութեան մէջ ա՛լ չիյնաս, որ երեւակայութիւնդ գրգռող

այն գիրքը չլնցնես, որ անաստուած ընկերներէդ ալլեւս հրաժարիս, եւ քու հոգւոյդ խաղաղութիւնը վրդովող մարդոց հետ չմտերմանաս, եւ բարիք ընես քեզի չար կամեցողներուն:

Զաւակս, հիմա գործիդ գնա, եւ հանդարտ, խոնարհ, հնազանդ եւ քաղցր եղիր: Վաղը աւելի սիրով եւ եռանդազին սրտով եկուր: Քեզի տալու դեռ շատ օրհնութիւններ ունիմ:

(Թարգ. (Վեր.) Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ

Ծնած եմ 1900 Յունուար 24ին Պրուսայի նահանգին Գարաաղած Եայլա ըստած գիւղին մէջ: Բողոքական ծնողքի մը զաւակն էի եւ միշտ ժողովներու կը յաճախէի: Հին Կտակարանի պատմութիւններէն շատ կը կարդայի եւ ծունկի վրայ գալով լալով կ'աղօթէի որ Աստուած ինծի Դաւիթի պէս զօրութիւն տայ բոլոր Տաճկաստանը կործանելու ու հայ ազգը ազատելու: Բայց աղօթքս չէր լսուեր: Մինչեւ 20 տարիքիս այդպէս կեանք մը անցուցի:

Անկէ վերջը ինքզինքս գինեմոլութեան, գողութեան, աւազակութեան, մարդասպանութեան եւ ամէն տեսակ անառակութեան տուի: Երբոր նեղութեան մէջ կ'ըլլայի, լալով Աստուծոյ կ'աղօթէի եւ կ'ուխտէի որ եթէ ազատիմ ալ մեղք պիտի չգործեմ, բայց երբոր կ'ազատէի, նորէն մեղքի մէջ իյնալով առաջուրնէ աւելի գէշ կ'ըլլայի: Կը հաւատայի Աստուծոյ, Քրիստոսի, երկինքի, դժոխքի գոյութեան, նաեւ գիտէի որ մեղք գործողը երկինք պիտի չերթայ: Բայց մեղքին գերի էի: Իմ յոյսս միայն այս էր որ երիտասարդ էի, երբոր ծերանամ այն ատեն մեղք չեմ գործեր կ'ըսէի: 1923ին, Յոյներուն Տաճկաստանէն ետ քաշուած ատենը մենք ալ միասին Յունաստան գացինք եւ հոն բաւական կեցանք: Մեր կեցած տեղը շատ մօտ էր ժողովարանին, ուր շաբաթը 3-4 անգամ ժողով կ'ըլլար: Ես միշտ ժողովի կ'երթայի, երբոր քարոզներ կը լսէի բոլորովին մեղքերս կը տեսնէի եւ կարծես թէ դժոխքի կրակը սրտիս մէջ կը վառէր: Բայց փրկութեան ճամբան չէին ցուցներ: Օր մը քանի մը ընկերներով մէկտեղ եկանք ու թուղթի մը վրայ որոշումներ գրեցինք եւ ուխտեցինք որ մինչեւ մեր կեանքին վերջը Աստուծոյ ուզածին պէս առանց մեղք գործելու կեանք մը պիտի ապրինք: Մեզմէ ա-

նոնք որ այս օրէնքին հնազանդիլ ուզեցին ստորագրեցին եւ զայնք հովիւին ցուցուցինք եւ անոր հաճութիւնը ընդունեցինք թէ կրնանք այս ճամբայով երկինք երթալ: Քանի մը օր շարունակելէ վերջ զանձապետի ընտրութեան վրայ կոխ մը հանեցինք, իրարմէ բաժնուեցանք եւ առաջուընէ աւելի գէշ եղանք, ինչու որ մեղքին գերի էինք:

1923ին Յրանսա եկանք եւ մեղքի մէջ աւելի կը յառաջանայի: Ամէն իրիկուն բարեկամներով փոփոխակի իրարու տունը կ'ուտէինք, կը խմէինք, կը զինովնայինք, կը պարէինք Սողոմի եւ Նոյի օրերուն պէս: Երբեմն խիզճա զիս կը յանդիմանէր ըրած մեղքերուն համար եւ ես կ'ըսէի ընկերներուն «Եկէ՛ք ամէնս ուխտենք որ Աստուծոյ դառնանք», բայց անոնք կարեւորութիւն չէին տար, և ես կ'ըսէի, եթէ անոնք դժոխքի կրակին կրնան զիմանալ, ես ա'լ աւելի կրնամ, ու կը շարունակէի մեղքի կեանքը: Ատեն մը ամբողջ մեղքերուն ծանրութիւնը կ'ունակիս վրայ բեռի մը պէս եղած էր եւ որոշապէս գիտէի թէ երբ մեռնիմ, դժոխք պիտի երթամ: Ինծի այնպէս կը թըւէր թէ քիչ յետոյ պիտի մեռնիմ, ու աշխարհի ինծի համար մութ էր: Եթէ ինծի աշխարհի բոլոր հարստութիւնը տրուէր, կրկին խաղաղութիւն պիտի չունենայի քանի որ իմ կեանքս բարակ թելէ մը կախուած կը տեսնէի: Ամէն օր լալով կ'աղօթէի ըսելով, «Ով Աստուած, ինչո՞ւ համար այսքան ծանր օրէնքներ դրիր մարդոց առջև որ կատարելու կարող չըլլամ, ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս, քանի որ ինքզինքս դժոխքի մէջ կը տեսնեմ, չկա՞յ ուրիշ ճամբայ մը որով կրնամ երկինք երթալ, ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս»: Եւ կ'որոշէի որ այսօր մինչեւ իրիկուն մեղք չգործեմ, ընդհակառակը այն օրը աւելի մեղք կը գործէի: Եւ երբ տեսայ որ մեղք չգործեմ անկարելի է, կրկին սկսայ մեղքի կեանքը շարունակել: Բայց կրակը սրտիս մէջ կը վառէր: Զեմ կրնար մոռնալ օր մը, երբոր մեղքը վրաս այնքան ճնշած էր որ, կարծես զիս պիտի խեղդէր: Այն ատեն ըսի, «Երանի թէ աշխարհի մէջ գտնուէր մէկը, որ զիս վստահացնէր թէ եթէ մեռնիմ արքայութիւն պիտի երթամ, այն մարդուն անօթի ու ծարաւ մինչեւ մահս ծառայ կ'ըլլայի»: Բայց չկար: Այն ատեն Տէրոջը մէկ ծառան նոր եկած էր Փոնտ Օպէնաս իբր հովիւ, եւ երբեմն կ'այցելէր մեզ: Հազիւ 20 վայրկեան կ'ունենար քարոզելու: Օր մը մեզմէ մէկը ամուսնացաւ, հովիւը եկաւ և պսակը ընելով գնաց: Երթալէն վերջ սկսանք գինովնալ պօռալ կանչել: Քարո-

զիչը կ'երթայ որ թրէյնը մեկնած է եւս կը դառնայ տուն եւ մեր վիճակը գիտնալով քովի սենեակ մը մտնելով երեսի վրայ կ'իյնայ ու մեզի համար կ'աղօթէ եղեր: Իմ մէջս պայքարը մեծ էր և ես ինքզինքիս կ'ըսէի, «Քանի որ Աստուած քեզի երկինք երթալու դիւրին ճամբայ չցուցներ դժոխք պիտի երթաս, ուստի մի վախնար, ուզածիդ պէս մեղքը շարունակէ»: Ուրիշ ձայն մը կ'ըսէր, «Հիմա գինիին գաւաթը մէկդի ձգելով, ամենուն առջեւ ուխտէ ասկէ վերջը բնաւ գինի եւ օղի չխմել, հապա Աստուծոյ ծառայել»: Վերջապէս երկրորդ ձայնին հնազանդելով ամենուն առջեւ ուխտեցի եւ երդում ըրի ըսելով որ ալ գինի պիտի չխմեմ: Եղբայրս կատողեցաւ և դառնակը քաշեց որպէսզի զիս մեռցնէ ըսելով, «Դինի չխմելէդ վերջ ի՞նչ պիտի ընեմ քեզ»: Վերջապէս ատկէ վերջը սկսայ բարոյական կեանք մը ապրիլ, ու թէեւ խոշոր մեղքեր չէի գործեր, բայց խաղաղութիւն ու փրկութեան վստահութիւն չունէի: 7 ամիսի չափ ալ այսպէս ապրեցայ: 1928ին Յուլիս ամսուան մէջ պատուելի Եղոյեանը մէկ ամսուան համար սիրոյ նիւթ մը գրած էր Մարանաթայի մէջ: Հոգևոր քոյր մը որ Մարանաթայ կ'ընդունէր, ամէն օր զայն առնելով կուգար մեր տունը միասին սերտելու: Բայց ի՞նչպէս կրնայի սէրը հասկնալ քանի որ սէրը իմ մէջս գոյութիւն չունէր: Ես դժոխքէն վախնալու համար քրիստոնեայ էի, ոչ թէ Աստուծոյ սէրը ճանչնալով: Օր մը այդ քոյրը ինծի հարցուց թէ դուն ապաշխարա՞ծ ես, անոր այո ըսի, յետոյ ըսաւ, փրկուա՞ծ ես, ըսի, ի՞նչ ըսել է փրկուիլ: Եւ քոյրը Աստուծոյ խօսքէն ինծի ցուցուց որ Աստուած Յիսուսով մարդը մեղքէն կ'ազատէ, նաեւ ցուցուց որ Յիսուսի կատարած քառութեանը հաւատալով մեղքերու թողութիւն կ'ստացուի: Անկէ վերջը իմ ծրագիրներս տալիս ու վրայ եղան:

Սկսույ դարձեալ Նոր Կտակարանին երթալ, երբոր եկայ Մատ. 5. 39 որ կըսէ, «Եթէ մէկը ապտակ մը դարնէ ալ ծնօտիդ, դարձուր անոր միւսն ալ», ես ըսի, «Դժոխք կ'երթամ, բայց երեսիս ապտակ զարնել չեմ տար», ու Սուրբ Դիւքը մէկ կողմ դրի: Դեռ ուրիշ շատ մը համարներու ալ հանդիպեցայ որոնց հնազանդիլը անկարելի էր իմ հպարտ սրտիս: Ոչ գիշերը քուն ունէի, ոչ ցորեկը խաղաղութիւն: Խորհեցայ որ անձնասպան ըլլամ, բայց նայեցայ որ եթէ մեռնիմ աւելի շուտ պիտի երթամ կրակին մէջ: Երբոր Աստուծոյ խօսքին մէջ զիրին ճամբայ մը կը փնտռէի, Յովհ. 6. 37 համարին հանդիպեցայ,

«... Եւ ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ: Այս համարը կ'արդացածիս պէս ծունկի եկայ, հաւատացի Աստուծոյ խօսքին, սիրտս Անոր նուիրեցի, մէկ վայրկեանին մէջ բոլոր մեղքերս շնչուեցան եւ կատարեալ խաղաղութիւն մը սիրտս լեցուց որ ամէն միտքէ վեր էր:

Աստուծոյ խօսքը որ զիս կը դատէր միայն, հիմա ազբիւր մըն է ուրկէ Բրիտանիոյ սէրն ու քաղցրութիւնը կը ծծեմ: Առաջ միայն դժոխքէն վախնալուս համար Աստուծոյ կը հաւատայի, հիմա կը հաւատամ Անոր որ իր միածին Որդին սուաւ իմ մեղքիս համար: Առաջ չէի կրնար մեղք չգործել, հիմա չեմ կրնար մեղք գործել: Մեղքը ինծի թշնամի եղած է եւ ուր որ տեսնեմ կ'ատեմ զայն: Երբոր մեղքը իմ մէջս մասնել ուզէ, Սուրբ Հոգին զօրաւոր ախոյեանի մը պէս դուրս կը վռնա՝ մեղքը իմ սահմանէս: Փառք Տէրոյս, ամէն բաները նոր ըրաւ իմ մէջս: Այսօր 4 տարի է որ Տէրոյն շնորհքովը կապրիմ, Փառք Անոր: Ոչ թէ ես կ'ապրիմ, հապա Բրիտանիոյ կ'ապրի իմ մէջս: Գաղ. 2. 20:

ԱՐԱՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Մանթէլիմար

Ս. ԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Անկանոն Գիրքեր Ա. Մաս:—

Բրիտանիոյ թեման նախնական շրջանին Յունարէնը գրեթէ տիեզերական լեզուն եղած էր: Այն քրիստոնեաներն որոնք կը փափաքէին Յունարէն լեզուով կարգաւ Հին Կտակարանը, կըրնային զոհացում գտնել արդէն ծանօթ «Եօթանասնից թարգմանութիւն»ովը: Միայն այս Սուրբ Գրքի թարգմանիչները չզոհանալով Պաղեստինեան կանոնին ընդունած գիրքերովը, անոնք վերայ աւելցուցին նաեւ կարգ մը գիրքեր(1): Ահա թէ որոնք են որ կ'երկին Եօթանասնից թարգ-

(1) Շատեր կը կարծեն որ Եօթանասնից Թարգմանութեան ընթացիկները չէին պարունակիր աթօքրիֆները եւ թէ ետքէն ընթօքրիֆներն աւելցուեցան անոնք: Կ'երեւի թէ քառական դժուար է այս խնդրոյն վերայ տեսական եւ որոշ կարծիք մը կազմել: Մեզի անպէս Թուեցաւ թէ քառական դժուարութիւններ կան երկու կողմէն ալ:

մանութեան ամբողջական ձեռագիրներուն մէջ: Մակարայեցոց 4 գիրքերը:

Եզրասի Գ գիրքը, (Նէեմիայի Բ. ք սեպուելով):

Յութիթ

Տովբէթ

Յիսուս Սիսագի իմաստութիւնը կամ Ժողովողը: Սողոմոնի իմաստութիւնը

Բարուք

Երեմիայի նամակը

Դանիէլի եւ Եսթերի գրքին յաւելումները:

Մանասէի աղօթքը

Ասոնցմէ միայն Յիսուս Սիրազ, Ա. Մակարայեցոց, Յութիթ, Բարուք եւ Թերեսա ալ Տովբէթ գրքերուն բնագիրները եբրայերէն գրուած են, իսկ մնացեալները յունարէն խմբագրուած են: Այս գիրքերը կը կոչուին «Աթօքրիֆ», այսինքն, պահուած, աչքի տեսողութենէ ծածկուած: Սկիզբէն այս անունը լոկ կոտորակեան եւ այլ հերետիկոսաց գիրքերուն կը տրուէր, որոնց ընթերցումը արգիւտուած էր հաւատացելոց, իսկ յիշեալ գիրքերը դեռ մասնաւոր անուն մը չունէին եւ միւս կանոնական գիրքերուն հետ կը կարգացուէին հաւասար հեղինակութիւն վայելելով: Իրաւ է թէ եկեղեցական հայրերէն Մեղիտոն և Որոգինէս հարց զրին թէ ստուգիւ ո՞ր գիրքերը մաս կազմելու են բուն եբրայական կանոնին բայց անոնց աշխատութիւնները զրական եւ ուժեղ ազդեցութիւն մը չէ թողած եկեղեցւոյն գործելակերպին վրայ: Նոյն ինքն Որոգինէս կը շարունակէ այն գիրքերէն մէջբերումներ ընել միւս Սուրբ Գրոց պէս, միշտ գիտնալով որ անոնք մաս չէին կազմեր եբրայական կանոնին(1):

Չորրորդ դարուն Յոյն եկեղեցին մասնաւոր կերպով ազդեցեալ Սուրբ Գրոց Ասորերէն թարգմանութենէն, որ միայն 24 կանոնական գիրքերը կը պարունակէր: Մակայն փոխանակ այլամերձօրէն յարելու այս կանոնին, անոնք հետ տեղ տրուաւ նաեւ անկանոն գիրքերուն, զանոնք դատաւորելով իբր տարբեր հաւաքածոյ մը «որ կրնար կարդացուիլ»: Եսթերի գիրքին վրայ բաւական վարանումներ տեղի ունեցան, եւ ոմանք ուզեցին զայն ալ նկատել այն գիրքերուն հետ որք անկանոն ըլլալով հանդերձ կրնային կարդացուիլ եկեղեցիին մէջ: Գլխաւորաբար Յեսու Սիրազ, Յութիթ, Տովբէթ եւ Սողոմոնի իմաստութիւնը կը կազմէին այս դասը:

Միւս կողմէն Չորրորդ դարուն Հատին եկեղեցին իր քուժարած երեք եկեղեցական Ժողով-

ներով 393 Լաւոգիկէ 397, 419 Կարկեղոն, կ'ըզբաղի կանոնին վերջնական հաստատումովը: Սիրազի, Սողոմոնի իմաստութեան, Յովթիթ, Տովբէթ, Ա. եւ Բ. Մակարայեցիք եւ Բարուք կ'ընդունուին իբրեւ կանոնական: Ե. դարու վախճանին այս որոշումը կը վաւերացուի Հոովմի եպիսկոպոսին կողմէն: Սակայն Յերոնիմոս (336-420) որոշ եւ ուժեղ կերպով կ'արտայայտուի անկանոն գիրքերուն դէմ, զանոնք առաջին անգամ ըլլալով Աթոքրիֆ կոչելով: Հակառակ այս ազդու բողոքներուն սակայն, տիրող գաղափարը յաղթանակեց: Օգոստինոս իր բոլոր տաղանդը եւ ազդեցութիւնը գործածեց աւանդութիւնը պաշտպանելու, արդէն տիրող կարծիքը օգնեց իրեն ու յաղթեց: Յետ այնու բոլոր միջին դարու ընթացքին Անկանոն գիրքերը կանոնական Գրոց համարժէք սեպուեցան: Նոյնպէս եղաւ նաեւ Հայաստանեայց, Ասորական, Հայկէջ եւ Ղպտի եկեղեցիներուն համար:

Կանոնական խնդրոյն շուրջ նոր ուսումնասիրութիւն մը ընել աւետարանական եկեղեցւոյ վիճակուած էր, որուն ձեռնարկեց մեծ փութով իր նախնական շրջաններուն իսկ: Առանց մանրամասնելու ըսենք թէ Պաղեստինական երրայական կանոնը ընդունուեցաւ իբր Սուրբ Գրոց սահման, բայց անկանոն գիրքերը բոլորովին անպէտ չսեպուեցան: Լուտեր իր Հին Կտակարանի թարգմանութեան վերջը կը գնէ ըսելով, «Աթոքրիֆ գիրքեր՝ որք առանց Ս. Գրոց հաւասար սեպուելու, արժանի եւ օգտակար են ընթերցման»: Այս կէտին մէջ կալվինականք եւս կը համաձայնէին անոր եւ կ'ընդունէին Անկանոն գիրքերը, «Ուսուցման համար օգտակար ըլլալուն համար»: Ուրեմն կը տեսնենք (եւ յաջորդիւ աւելի պիտի անդրադառնանք) որ բարեկարգեալ եկեղեցիներն իրաւ լուրջ քայլ մը առին զատելով բուն ներշնչեալ գիրքերը Անկանոն գիրքերէն, առանց սակայն վերջնականապէս լքելու այս վերջինները:

Սակայն 1804ին Լոնտոնի մէջ հիմնուեցաւ Անգլիական Սբ. Գրոց Ընկերութիւնը, ընթացք տալով ի մասնաւորի Սկովտիոյ եւ հետզհետէ Անգլիոյ մէջ ալ ծաւալող գաղափարին թէ պէտք է տարածել միայն եբրայական կանոնին համեմատ եզոյ Սբ. Գիրքերը: Կարեւոր պառակտումներ եւ բաժանումներ տեղի ունեցան այս ընկերութեան գործակից մասնաճիւղերուն միջեւ: Սակայն ընկերութիւնը աննկատ թողուց ամէն բողոք ի հարկին խզելով իր յարաբերութիւնները ու շարունակեց բուն Սբ. Գիրքերը տարածել ա-

մէն տեղ շնորհիւ իր բազմաթիւ մասնաճիւղերուն: Ահա թէ ինչո՞ւ այսօր գործածուած Սուրբ Գրոց գրեթէ բոլորն ալ, չեն պարունակեր Անկանոն գիրքերը: Կաթոլիկ եկեղեցին այս խնդիրը կրկին քննեց իր նախկին հռչակաւոր Տիեզերական ժողովին (Concile de Treute 1546) որոշումը, արդէն ընդունուածին հաւատարիմ մնալու համար, մասնաւոր բողոքական տեսակէտին հակազդելու մարմաչով: «Վուլկաթ»ին պարունակած բոլոր գիրքերը, մէջը ըլլալով նաեւ Անկանոն գիրքերը, «Կանոնական» հռչակեց: Նոյն ժողովը սակայն Գ. եւ Գ. Եղրաս ու Մանասէի աղօթքը կանոնական չսեպեց: Բայց Վուլկաթի պաշտօնական հրատարակութիւնը զանոնք ալ կը պարունակէ միայն թէ զատէն եւ մանր գիրքերով տպուած են ու դիտողութիւն մ'ալ կայ որ կը ծանուցանէ թէ «Ասոնք վաւերական ցանկէն դուրս են»: Սակայն եթէ իրապէս անվաւեր են, ի՞նչ հարկ կար տպելու այդ մասերը: Վուլկաթի պէս հեղինակաւոր գրքի մը մաս կազմելը արդէն իրենց մարդկայինէն վեր, աստուածայինի մօտ հեղինակութիւն մը կուտայ: Այս պատճառաւ ալ կարգ մը կաթոլիկ աստուածաբաններ փորձեցին տարբերութիւն մը գնել ներշնչեալ եւ անկանոն գիրքերու կանոնական ուստիճանաւորումին մէջ, Աթոքրիֆներ, «Երկրորդական կանոնական» կոչելով: Բայց այս ջանքերը արձագանգ չգտան եւ 1870ին Վատիկանի ժողովը վաւերացուց Trenteի ժողովը: Իսկ Յոյն եկեղեցին երկա՛ր վիճաբանութիւններէ յետոյ հետեւեցաւ Հոովմէական եկեղեցիին:

Թէ կաթոլիկ եկեղեցին սրբա՞ն իրաւունք ունէր այս յաւելումն ընելու, մեր նպատակէն դուրս կ'իյնայ մանրամասնօրէն ճշդել: Ըսենք միայն որ մեր կարծիքով, ի մէջ այլոց հոովմէական եկեղեցւոյն գործած էն ահաւոր սխալներէն մին եղաւ անբաւարար եւ յաճախ կասկածելի պատճառներով, ու աւանդութիւնը յարգելու համար, խել մը գիրքերը իբր կանոնական ընդունիլը: Այդ գիրքերը բնաւ տեղ ունեցած չեն եբրայական կանոնին մէջ եւ Հիմոնանք որ «Աստուծոյ պատգամները անոնց հաւատացուեցան» (վատահուեցան) Հոով. Գ. 2: Անգնահատելի է Հոովմէական եկեղեցւոյ մատուցած ծառայութիւնը Նոր Կտակարանին ձեռագիրներուն պահպանութեանը մէջ, բայց նոյնքան ողբալի, ցաւալի է Հին Կտակարանին դէմ գործուած այս սխալը: Ահա թէ ինչպէս կ'արտայայտուի այս մասին Նօթանի աստուածաբանական դպրոցի տնօրէն Վեր. Տր. Ռ. Սայեսան: «Պէտք է ընդունիլ որ աստուածա-

յին միջամտութիւն կար այն վստահութեան մէջ որով Հրեայ ժողովուրդը առաջնորդուեցաւ կազմելու Հին Կտակարանը: Հաւատացեալները որ ժողովուրդին մէջ կը կազմէին հոգեւոր Իսրայէլը («Քանզի ոչ թէ ամէն Իսրայէլէ եղողը Իսրայելացի է» Հոով. Թ. 6), վերէն, Սուրբ Հոգիէն ներշնչուեցան զանազանելու ներշնչեալ գիրքերը եւ անոնցմով կազմելու այն հաւաքածոն որ մենք իրենցմէ ստացանք եւ որ մեզի համար Աստուծոյ խօսքն է, քանի որ Յիսուս ինքն ալ որոշապէս զայն իբր այդ ընդունեց: Աստուծոյ ձեռքը կարծես երեւելի է այդ հաւաքածոյին պահպանութեանը մէջ եւ այս մասին ունէ տարակարծութիւն չէ եղած հրէական տարբեր դպրոցներու միջեւ(1): Փարիսեցիք, Սադուկեցիք, Եսսինեանք, պահպանողական կամ արդիական Հրեաները միշտ համաձայնած են այս էական կէտին վրայ: Հին Կտակարանի Ֆրանսերէն Ռուբունական Թարգմանութիւնը կը բաղկանայ բողոքականաց հրատարակած Սբ. Գիրքերէն միայն: Կաթոլիկ եկեղեցին ինքզինքին թուաւորած է Աբօղրիֆները աւելցնել անոնց վրայ, բայց Հրեայք երբեք ընդունած չեն զանոնք(2): Այսքան կարեւոր խնդրոյ մը մէջ սակայն բաւական չէ զբաղիլ լոկ զիրքերուն արտաքին պատմական արժէքով, այլ պէտք է քննել զանոնք իրենց հոգեւոր, ներքին արժէքով: Յայնժամ աւելի լաւ պիտի կրնանք ըմբռնել անկանոն գրոց դէմ արտայայտուողներու կարծիքը, եւ պատեհութիւն պիտի ունենանք մենք եւս կազմելու գէթ որոշ Հափով մը մեր անձնական կարծիքը: Զայս կարելի ընելու համար կ'առաջադրենք յաջորդիւ քննելու Անկանոն Գրոց «Ներքին արժէքը»:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

(1) Իրաւ է թէ երբեմն տարակարծութիւն եղած է Եսսիսի, երգ երգոց, Առական եւ Ժողովուրդի շուրջ բայց ի վերջոյ նոր Սաներիոնը Երուսաղէմի աւերումէն 20 տարի վերջը ընդունեց եւ վաւերացուց մեր ծանօթ կանոնը:

(2) R. SAILLESS, Le Mystère de la Foi 1931 էջ 40-41:

Սթէյնլի գիրք մը երեք անգամ կը կարդար, նախ անոր պատմութիւնը ուսումնասիրելու համար, երկրորդ՝ անոր խորհուրդները, երրորդ՝ անոր ոճը: Սուրբ Գիրքի ընթերցողաց յանձնարարելի կերպ մը:

ՄՈՒՏԻ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԷՆ

Քրիստոսի վրայով Ի՞նչ կարծիք ունիք: Մատ. ԻԲ. 42

Ան, որու համար Մովսէս օրէնքին մէջ գրեց, եւ մարգարէներն ալ, դ'Անիկա գտանք: Յովհ. Ա. 45

Ա. Մարգարէներուն վկայութիւնը.—

Յակոբ—«Անիկա Սելոմի է» (խաղաղութիւն ընողը) Ծննդ. ԽԹ. 10:

Բաղաամ—Յակոբի աստղը թուոց ԻԴ. 17:

Մովսէս—Մարգարէն Բ. Օրին. ԺԸ. 18:

Դաւիթ—Տէրոջը Օծեալը Սաղ. Բ. 2:

Եսայի—Տէրոջը Շառաւիղը, Եսայ. Դ. 2:

Էմմանուէլ Է. 14: Սքանչելի, Խորհրդակից, Հըզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան Թ. 6: Յէսսէի բունէն ընծիւղը ԺԱ. 4: Ընտիր Վէմ, Պատուական անկիւն, Հաստատուն հիմ է ԻԸ. 16: Տէրոջը ծառան ԽԲ. 1, 19: ԽԹ. 3: Աստուծոյ Դեսպանը ԽԲ. 19: Ագգերուն լոյսը ԽԲ. 6: ԽԹ. 6: 4. 3: Վիշտերու ուցաւերու տէր մարդը ԾԳ. 3:

Երեմիա—Արդարութեան Շառաւիղը Երեմ. ԻԳ. 3: Տէրը մեր արդարութիւնը ԻԳ. 6:

Եղեկիէլ—Միակ հովիւը Եղեկ. ԼԴ. 23:

Դանիէլ—Որդին մարդոյ Դան. Է. 13: Սրբոց Սուրբը Թ. 23:

Միքիա—Անիկա, որուն ելքը ի հնուց յաւիտենական օրերէն է Միք. Ե. 2:

Զաքարիա—Անիկա Արդար, Փրկիչ, հեզ թագաւոր է Զաք. Թ. 9: Աստուծոյ ընկերը եղող մարդն է Զաք. ԺԳ. 7:

Մաղաքիա—Ուխտին հրեշտակը Մաղ. Գ. 1: (Շար)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՐԵՏԵՐԻՔ ՕՊԸՐԼԻՆ

ՕՊԸՐԼԻՆ ԵՒ ՅՐԱՆՍԱԿԱՆ ՄԵԾ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մեծ յեղափոխութեան (1789) ալիքները թափանցեցին նաեւ Շիթայնթալի մէջ: Հոն ալ եկաւ այն հրամանը, որով յեղափոխական կառավարութիւնը կ'արգիլէր բոլոր կրօնական պաշտամունքները եւ անոնց տեղը կը հաստատէր աշխարհիկ ժողովներ: Համայնքը իր մէջէն ընտրելու էր «Եղբայր նախագահ» մը եւ «Եղբայր բանախօս» մը՝ վարելու այդ ժողովները: Կիրակին ալ վերացուելու էր եւ անոր տեղը տօնուելու էր

տառներորդ օրը իբր հանգստեան օր: Եկեղեցի-
ներն ալ ահուժքներու վերածուելու էին:

Շատեր հակառակեցան այս կարգադրութիւն-
ներուն եւ բանտարկուեցան, ոմանք նոյնիսկ
մահուամբ քաւեցին իրենց այդ յանցանքը: Սա-
կայն Օպլըրին գիտցաւ Աստուծոյ իմաստութիւ-
նով՝ այդ դժուարութիւններուն տակէն ալ ելլել:
Գիտցաւ կայսրինը կայսրին տալ եւ Աստուծոյնը
Աստուծոյ: Կրօնական պաշտամունքները արգիւղ
հրովարտակ հրատարակուելէն յետոյ՝ կանչեց
իր համայնքը, անոնց կարգաց կառավարութեան
հրամանը եւ բացատրեց թէ կատարելու է ինչ
որ իշխանութիւնը կը հրամայէր: Ատոր վրայ
ժողովականները իրենց ազատ քուէովը իբր «եղ-
բայր նախագահ» ընտրեցին իրենց ուսուցիչը եւ
իբրեւ «Եղբայր բանախօս»՝ Օպլըրինը: Յետոյ Օ-
պլըրին բեմ բարձրացաւ եւ ըսաւ, «Հիմա հարցը
ան է թէ մենք որ մէկ տունը եւ որ մէկ օրը ընտ-
րելու ենք մեր ահուժքի ժողովներուն համար:
Եղբայր նախագահին տունը միայն մէկ սենեակ
ունի... բայց անոր մէջ հազիւ մեր կէս մասը կը-
նայ տեղ գտնել, քանի որ կիներն ալ կը փա-
փաքին ժողովներու ներկայ գտնուիլ, երիցա-
տունն ալ փոքր կուզայ: Ուստի ես մեր ահուժ-
քին համար ամբողջ Շթայնթալի մէջ չեմ ճանչ-
նար աւելի յարմար տուն մը, քան զայն, զոր
մինչեւ հիմա իբր եկեղեցի կը զործածէինք»:

Գիւղացիները բոլորն ալ ատոր իրենց հա-
մամտութիւնը յայտնեցին: Յետոյ Օպլըրին շա-
րունակելով ըսաւ, «Դալով ժողովի օրուան» եր-
կուշաբթին անյարմար է, քանի որ մեզմէ շա-
տերը Սթրազպուրկ պազարը կ'երթան, նոյնն է
նաեւ Դ. շաբթի եւ ուրբաթ օրերուն համար: Ուստի
ես կը խորհիմ թէ մեր նախկին կիրակին ամե-
նէն յարմար օրն է»: Ժողովականները ատոր ալ
իրենց համամտութիւնը յայտնեցին:

Յաջորդ կիրակին ժամը 9ին անոնց հաւա-
նութեամբ Օպլըրին բեմ բարձրացաւ եւ անգամ
մըն ալ անոնց կարգաց կառավարութեան հրա-
մանը եւ ապա ըսաւ, «Կառավարութիւնը կ'ուզէ
որ մենք բռնապետներուն դէմ խօսինք: Եւ ամէն
մէկ լաւ հանրապետական պէտք է որ ատէ բռ-
նապետները եւ մարտնչի անոնց դէմ անդադար
եւ ատանց զինադուլի: Բայց որոնք են բռնա-
պետները: Հնուց ի վեր բռնապետներ եղած են
աս ու ան անձը եւ ըրած են աս ու ան չարիքը:
Բայց մենք մեր լոկի Շթայնթալի մէջ հիմա
այդպիսի բռնակալներ չունինք: Ուստի ի դժբա-
ղէն անոնց դէմ խօսիլ: Սակայն եւ այսպէս ես կը-
նամ անուանել բռնակալները, որոնք կը բնակին

ոչ թէ միայն Շթայնթալի եւ ձեր տուններուն՝ այլ
նաեւ ձեր սրտերուն մէջ: Ասոնք են մոլութիւն-
ները, չար ցանկութիւնները, որոնք հոգւոյն դէմ
կը կռուին եւ որոնց հետ երբեք խաղաղութիւն
ընելու չէ: Եւ այս բռնապետներուն դէմ կ'ուզեմ
եւ հոս խօսիլ, ես ձեզի պիտի անուանեմ նաեւ
այդ բռնապետները ոչնչացնելու ամենէն լաւ մի-
ջոցը, աս է միայն Քրիստոսով մեզի մատուց-
ուած փրկութիւնը:

Եղբայր բանախօսը ժամանակ մը այսպէս
խօսելէն ետքը հարցուց, «Թէ ձեզի եւ թէ ինծի
համար լաւ չպիտի՞ ըլլար բան մը երգել: Քա-
նի որ մենք ուրիշ երգեր չենք գիտեր, կրնանք
երգել մեր նախկին երգարանէն, ձեզի բոլորիդ
ծանօթ այս կամ այն Սաղմոսը»: Ատոր ալ ու-
րախտութեամբ հաւանութիւն յայտնուեցաւ:

Այսպէս Շթայնթալիք ուրախութեամբ կ'եր-
գէին եւ կ'աղօթէին իրենց «Եղբայր բանախօ-
սին» հետ եւ Շթայնթալի ահուժքը ամբողջ ձը-
րանսայի մէջ թերեւս միակ վայրն էր, ուր այն
օրերուն Տէր Յիսուս Քրիստոսի անունը կը քա-
րողուէր եւ ժողովուրդը կենաց հացովը կը կերա-
կրուէր:

Շթայնթալը մին էր նաեւ այն հազուագիւտ
վայրերէն, ուր սարսափի եւ արիւնի օրերուն ա-
պաստան գտած էին բազմաթիւ փախստական-
ներ, նոյնիսկ յեղափոխական պարագլուխներ, ո-
րոնք փախած էին կոտորածէ եւ պիտատուէ: Ա-
նոնք երիցատան մէջ միշտ լաւ ընդունելութիւն
եւ հիւրասիրութիւն կը վայելէին:

Ասոնց մէջ էր նաեւ կաթոլիկ քահանայ մը,
Լէօ Նիցինկըր անունով. անոր հոգ—աւետարա-
նական երիցատան մէջ—ապաստանելէն քանի
մը օր յետոյ՝ Օպլըրինի հաւատարիմ սպասուհին,
Շէփլըր եկաւ եւ աղաղակեց, «Բազը ոստիկան
զինուորներ կան»: Ամէնքն ալ վեր ցատկեցին եւ
շփոթած կը նայէին մէյ մը Օպլըրինի, մէյ մը
կաթոլիկ քահանային վրայ: Օպլըրինի հարցման
վրայ՝ սպասուհին պատասխանեց, «Չերգուեալ
քահանայ մը Շթայնթալ ապաստանած է, ուստի
անոնք կ'ուզեն տունը խուզարկել»:—«Ըսէ անոնց
թող հաճին հոս գալ», յարեց Օպլըրին եւ ապա,
մահուան սարսափէն աժգունած քահանան ա-
ռաջնորդեց իր ննջարանը եւ ըսաւ անոր, «Բոլո-
րովին հանդարտ կեցէք»: Հազիւ զոցուած էր նն-
ջարանին դուռը եւ ահա լսուեցաւ ոստիկան զին-
ուորներուն ստնածայրը: Օպլըրին ձեռքերը դէպի
երկինք բարձրացուց եւ աղաղակեց, «Հայր, ա-
զատէ զայն, ազատէ մեզ»: Քանի մը երկվայրկ-
եան յետոյ դուռը բազկեցին, ոստիկան զինուոր

մը ներս մտաւ եւ ըսաւ, «Ներէ քաղաքացի Օպլըրլին, մինք կը հետապնդենք չերգուեալ քահանայ մը, որ մեր կեանքը շատ կը դառնացնէ, թուլաորէ որ քու հիւրերդ տեսնենք եւ տունդ խուզարկենք»: Օպլըրլին պատասխանեց, «Դուն կը ներկայանաս քչիկ մը խիստ, բայց քու պարտականութիւնդ կը կատարես, եւ պարտականութիւնը նուիրական է ամէն քրիստոնեայի համար, ուստի խուզարկէ տունս»: Յետոյ բռնեց ոստիկան զինուորին ձեռքէն եւ առաջնորդեց զայն մէկ տեղէն միւսը: Երբ խուզարկութիւնը լրացած էր, Օպլըրլին ըսաւ հանդարտութեամբ ու պաշարիւնութեամբ, «Տունը խուզարկեցիր, ահա նաեւ իմ անձնական ննջարանս, կ'ուզե՞ս զայն ալ տեսնել»: Եւ պատուելին մօտեցաւ իր ննջարանին, կամացուկ մը բացաւ անոր դուռը, եւ տիրական ու զօրաւոր կերպով նայեցաւ ժանտարմին աչքերուն մէջ: Վերջինս միայն հարեւանցի ակնարկ մը նետեց սենեակին տեսանելի մասին վրայ եւ ըսաւ դժկամօրէն, «Բաւ է, ներողութիւն կը խնդրեմ, ես անձամբ կը նեղուիմ այս բանէն»: «Դուն քու պարտականութիւնդ կատարեցիր», յարեց Օպլըրլին ու առաջնորդեց զայն վար՝ իր ընկերներուն քով եւ բոլորին ուտելիք տալով ճամբայ դրաւ: Անոնք շնորհակալ եղան ու մեկնեցան:

Ասոր վրայ հաւաքուեցան երիցատան մէջ ներկայ գտնուող բոլոր անձերն ալ Օպլըրլինի սենեակը եւ սրտաշարժ ազօթներով շնորհակալութիւն յայտնեցին Աստուծոյ: Ազատուած քահանան ալ կամացուկ մը դուրս եկաւ ննջատենեակէն եւ ծնրադրեց ազօթոյներուն քով:

Յեղափոխութեան օրերուն Օպլըրլին անձամբ ալ ձերբակալուեցաւ երկու անգամ: Առաջինը 1789ին էր, երբ մինչեւ Սթրազպուրկ տարուեցաւ հարցաքննութեան համար: Սակայն դատաւորները զինքը շուտով ազատ արձակեցին, երբ լսեցին իր օգտակար գործունէութեան նըկատմամբ Շթայնթալի մէջ: Երկրորդ ձերբակալութեամբ մինչեւ Պրիզմոսոն տարուեցաւ (1794ին): Այդ ատեն ալ աներկիւղ կը հետեւէր պաշտօնեաներուն, քանզի նա Աստուծոյ վատ ոչ ոքէ կը վախնար: Այս վերջին ձերբակալութենէն ալ շուտով ազատեցաւ՝ Բուպէսթէրի եւ սարսափի իշխանութեան անկումովը:

(Շար.)

Ս. ԳԻՐՔԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Ներկայ դարու քրիստոնեաներուն մեծամասնութիւնը անտարբեր կը կենան Քրիստոսի երկրորդ գալստեան կարեւոր խնդրոյն հանդէպ: Մարգարէութիւնները Սուրբ Գրքին 1/3 մասը կը կազմեն, եւ Քրիստոսի Բ. գալուստը նոր կատարանի 27 գիրքերուն 25 ին մէջ յիշուած են: Մենք կրնանք ականջնիս գոցել երբ Աստուած ուզած է խօսիլ:

Մեր օրերուն բոլոր սխալ վարդապետութեանց պատճառը՝ մարդոց Սուրբ Գրքին վրայ ունեցած ողբերգական ազդեցութիւնն է (Մատթ. ԻԲ. 29, Բ. Տիմ. Գ. 16, 17): Ճշմարտութեան—այսինքն Աստուծոյ խօսքին—վրայ սէր ունենալը կրնայ մեզ ապահով պահել, քանզի այս մեզ իմաստուն կ'ընէ Քրիստոսի մօտակայ գալստեան փառաւոր դէպքին վրայով:

Այս կէտին վրայ պահում յանցաւոր լութիւնը երբեք հիմակուան չափ աններելի չէ եղած. վասնզի Աստուած մարգարէութիւնները կը բացատրէ՝ մէկ կողմէն՝ զանոնք մեր աչքերուն առջեւ կատարելով: Ճիշդ է թէ մարդոց սրտերը կը նուազին իրենց վախէն եւ աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն եւ անձկութեամբ կը հարցնեն, «Դէպի ո՞ւր կ'երթանք», «Վաղը ի՞նչ պիտի պատահի»: Այս հարցումներուն միայն Սուրբ Գրքը կրնայ պատասխանել որովհետեւ նա գալիք բաները դեռ չեկած կ'ազդարարէ: Շատ մը մարգարէութիւններ բառ առ բառ կ'ատարուած են եւ կրնանք տակաւին մընացածներուն ալ բառ առ բառ կատարման ըստ պահել:

1917 Դեկ. 9ին Չօր. Ալէնպի Երուսաղէմը զըրաւեց: Յաջորդ օրը «Նիւ Եօրք-Ուրըլտ» անուն թերթը ամբողջ էջ մը յատկացուցած էր այս դէպքին: Հոն կը տեսնուէր ի մէջ այլոց պզտիկ հրեայ տղու մը նկարը իր մեծ հայրիկին ծունկերուն վրայ նստած: «Հիմա որ Երուսաղէմը առնուեցաւ՝ ասկից յետոյ ի՞նչ պիտի պատահի», կը հարցնէր մանուկը: «Կեցի՛ր քիչ մը, տեսնեմ Սուրբ Գրքս ի՞նչ կ'ըսէ», կը պատասխանէր ծերունին: Ի՞նչ իմաստուն պատասխան: Այո, միայն Աստուած գիտէ ապագան, բայց Իր շնորհքովը բարեհաճած է զայն մեզի յայտնել (Ամով. Գ. 7 Եսայ. ԽԶ. 9-11): Ուստի եթէ մենք չզիտանք ժամանակի նշանները գտնողանել, յանցանքը մերն է: Այս մասին ազդեցութիւնը ծանր փաստներու կ'ենթարկէ մեզ: Իրաւ որ տարօրինակ ժամանակի մը մէջ կ'ապրինք, եւ Աստուծոյ խօս-

քէն զատ ոչ մէկ բան կրնայ մեր տեսած ու լսած դէպքերուն կարեւորութիւնը եւ նշանակութիւնը մեզի յայտնել:

«Ես միշտ Ս. Գիրքս եւ քաղաքական դէպքերը միասին կը կարդամ», կ'ըսէր բարձրաստիճան սպայ մը, «եւ կը տեսնեմ թէ երկուքը իրարու կը յարմարին, ինչպէս բանալի մը կը յարմարի կղպանքին: Սբ. Գիրքը գալիք դէպքերը կ'ազդարարէ, իսկ թերթերը կը ներկայացնեն զանոնք»:

Պիտի ըսէք թէ Սբ. Գիրքն ու օրաթերթերը նոյն մակարդակին վրայ կը դնէք: Սուրբ Գիրքը Աստուծոյ խորհուրդը անվիճելիօրէն յայտնող անսասան վէմն է: Իսկ թերթերը, էապէս մարդկային ձեռքերու ու մտքի անդադար փոխուող գործերու արտադրութիւնը, բայց եւ այնպէս Սուրբ Գիրքն ու քաղաքական թերթերը խորհրդաւոր կերպով միացած են: Թերթերը անգլալարար Ս. Գրքին հրաշքը կ'արդարացնեն եւ Անոր փառաւոր վկայութիւն մը կուտան:

Քանի մը օրինակներ տանք.—

Ըստ Սուրբ Գրքին՝ մարդը անկարող է տեւական խաղաղութիւն մը ստեղծել, ըլլայ այդ զինաթափութեան դաշնագիրներով, ազգերու դաշնակցութիւններով կամ միաբանութիւններով: Ս. Գիրքը կ'ըսէ թէ ընդհակառակը մեր ժամանակամիջոցը պիտի վերջանայ գազանային պատերազմով մը՝ որուն մէջ բոլոր ազգերը բաժին պիտի ունենան: Այս վերջին պատերազմին դաշտը Պաղեստին պիտի ըլլայ (Յովել Բ: Դան. Ը. 23-25: Ա. թես. Ե. 3: Յայտ. ԺԶ. 16):

Թերթերը մեզի կ'իմացնեն թէ ոչ մէկ ժամանակ հիմակուան չափ զէնքի տակ զինուոր չէ եղած: 59 ազգեր կը պահեն 6 միլիոնէ աւելի պատերազմիկներ որոնք կազմ ու պատրաստ հրամանի կ'սպասեն մէկ վայրկեանէն միւսը զիրար սպաննելու: 24 միլիոն զինուոր ալ պահեստի կը պահուին կռիւը շարունակելու համար: Օգոստին պատերազմի մը համար պատրաստութիւնները արագօրէն յառաջ կը տարուին բոլոր ժողովուրդներուն մօտ: Երբեք չէ եղած ասին մը որ մարդիկ հիմակուան չափ կործանումի միջոցներ հնարած ըլլան: Վերջին մեծ պատերազմի ամբողջ 5 տարիներու ընթացքին օգէն նետուած ռումբերու կշիռ գումարը կարելի է այսօր 24 ժամուան մէջ սպառել: Այժմ օդանաւով ռմբակոծումը կրնայ ոչնչացնել մեր քաղաքակրթութիւնը, այս է հոչակաւոր զօրավարի մը կարծիքը:

Ըստ Ս. Գիրքին՝ յաջորդ պատերազմը կ'ուռի պիտի բռնէ Արեւելեան եւ Արեւմտեան ազգերը

(Եզեկ. ԼԸ եւ ԼԹ: Յայտ. ԺԶ. 12)

Թերթերէն կ'իմանանք թէ ծայրագոյն Արեւելքի դէպքերը շատ սպառնալից են: 1926 Նոյ. 13ին «Թայմզ» մեծ օրկանը կը գրէր թէ Արեւելեան ցեղերու ընկերակցութիւն մը կազմուելու վրայ է: Անկից ի վեր դէպքերը բոլորովին հաստատեցին այս նախատեսութիւնը: Ռուս կառավարութիւնը կը քաջալերէ «Ասիական ազգերու դաշնակցութեան» մը կազմուիլը: Այս դաշնակցութեան մաս պիտի կազմեն Սովիէթ Ռուսիա Զինաստան, Պարսկաստան, Աֆղանիստան եւ Թուրքիա: Այս դաշնակցութիւնը մրցակցութեան պիտի մտնէ Ժընեւի ազգերու դաշնակցութեան հետ:

Ս. Գիրքը կը մարգարէանայ թէ Գերմանիա (Գոմեր) բոլոր իր բանակներովը Ռուսիոյ տրամադրութեան տակ պիտի ըլլայ՝ երբ այս վերջինը Պաղեստին արշաւէ (Եզեկ. ԼԸ, ԼԹ): Միջանկեալ կերպով ըսենք թէ Ռուս տէրութիւնը Եզեկիէէն 1500 տարի յետոյ հիմնուեցաւ:

Թերթերը կը յայտարարեն թէ Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ գաղտնի համաձայնութիւն մը գոյութիւն ունի:

Ս. Գիրքը կ'ազդարարէ թէ Հրեաները իրենց մէջ պիտի վերահաստատուին, եւ այս վերահաստատումը Յիսուս Քրիստոսի Բ. Դաւուստը պիտի պատրաստէ: Ան կ'ըսէ նաեւ թէ Ժողովուրդները զանոնք պիտի առնեն եւ իրենց տեղը պիտի տանին (Եռայ. ԺԴ. 1, 2: Մատ. ԻԴ. 32-33 Եզեկ. ԺԱ. 47)

Թերթերը կ'ըսեն թէ այն օրէն ի վեր որ Անգլիա Ազգերու դաշնակցութեան կողմէ Պաղեստինի խնամակալութիւնը ստանձնեց, այդ երկիրը արագօրէն կը վերածնի եւ անոր աւերակները կը վերաշինուին: 1918ին հոն միայն մօտ 56000 հրեաներ կային, 1929ին այս թիւը 154330ի կը հասնէր: Համալսարան մը, դպրոցներ, գործարաններ, երկրագործական ծաղկեալ գաղթավայրեր, նոր նաւահանգիստ մը Հայֆայի մէջ, ամէն ասոնք որոշ նշաններ են կազմուածուն «Թըզնիին» որուն տերերները արագօրէն կը բուսնին» 18 դարեր ամլութեան եւ մահուան մէջ մնալէ յետոյ: Պաղեստին վերադարձող իւրաքանչիւր Հրեայ՝ տիրող ազգերու գերիշխանութեան դադարին զարնուած դամ մըն է: Հրեական հարցը այժմ համաշխարհային կարեւորութիւն ստացած է: Այս հարցը ամէն օր աւելի կը կնճռոտի՝ որովհետեւ անիկա համաշխարհային քաղաքականութեան զօղարին կէտն է: Անցեալ տարուայ վախճանին հրեաները անձկութեան մէջ էին,

քանզի կը կարծէին թէ խաբուեցան եւ իրաւագուրկ եղան: Ասիկա եզեկ. Լէ. 11ի մարգարէութեան կատարումը չէ: Վճիռներ կրնան արձակուիլ, գործադրուիլ կամ շնչուիլ, բայց մարդկային եւ ոչ մէկ գորութիւն կրնայ արգիլել Աստուծոյ ժողովուրդին համար ունեցած ծրագիրներուն գործադրութիւնը:

(Շար.)

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՍԱՄՈՒԷԼ

Շար. 11. Խիւէն

ՄՕՐ ՄԸ ՈՒՆՏԸ

(Կարդալ Ա. Թագ. Ա. 9—Բ. 40)

Բարերարդարաբար Աննա լուծեան առաքինութիւնը կը ճանչնար: Ան իր նախանձորդին զրգոթութիւններուն չէր պատասխաներ: Նոյնիսկ իր ամուսնոյն նա շատ չէր պատմեր իր ցաւերը: Աստուծոյ առջեւ էր որ զանոնք կը թափէր: Ըսուած է թէ ամէն մեծ մարդ իր հօրը զաւակը ըլլալէն եւս աւելի իր մօրը զաւակն է: Եւ չեմ գիտեր թէ այս խօսքը միշտ շիտա՞կ է, բայց Սամուէլի մօտ այսպէս ըլլալ կ'երեւի: Երբ օր մը իր ժողովուրդը իր սիրաւ պիտի կոտորէ իրմէն թագաւոր մը ուզելով, երբ այս թագաւորը իրեն ամբարշտութեամբը մերժումի պիտի արժանանայ, մարդոց չէ, հապա Տէրոջն է որ նա կ'երթայ իր սրտին ցաւը բանալ: Նա կ'աղօթէ: Իրեն կը պատահի նոյնիսկ ամբողջ գիշեր մը աղօթել (Ա. Թագ. ԺԵ. 11): Կը խորհիմ թէ Սամուէլ այս գերազանց դասը մօրմէն սորված էր:

Աննա կ'աղօթէր: Օր մը իր աղօթելը սովորականէն աւելի թախանձանքով ու եռանդով եղաւ երբ նա Սելով Տէրջը տաճարին մէջ էր: Նա հոս այս առթիւ ուխտ մը ըրաւ: Ուխտ ընելը արգիւտած չէ մեզի, պայմանաւ որ ուխտը սակարկութիւն մը չըլլայ: Երբեմն մեզի թուարարուած է այս կամ այն ծառայութիւնը խոստանալ Աստուծոյ, եթէ նա մեր մասնաւորապէս փափաքած մէկ շնորհքը մեզի տայ: Քանի՜ քանիներ Աննան օրինակած են: Քանիներ գեռ պիտի օրինակեն: Ո՞վ Աստուծոյ, եթէ ինծի տղայ մը տա՞մ նա Քուկդ պիտի ըլլայ. ես զայն Քեզի պիտի նուիրեմ. ինծի չէ հապա Քեզի պիտի ծառայէ. Քուկդ, միայն Քուկդ թող ըլլայ. թող պատուելի ըլլայ, միայն

իոնար ըլլայ: Ա՛հ, այս տեսակ ուխտերու չէ՞ որ կը պարտին Աստուծոյ ամենէն մեծ եւ աւանդն օգտակար ծառաներէն քանի մը հատերը: Պատանի բարեկամներս, թերեւս ձեր մէջ ոմանք կան նմանօրինակ ուխտերու (չըսեմ բեռներու տակ, աւելի ճիշդ է ըսել առանձնաշնորհման) տակն են, ուխտեր, զոր ձեր մայրիկները կամ հայրիկները ըրեր են նոյնիսկ ձեր ծնանելէն ալ առաջ: Ձեզմէ թախանձանք կը խնդրեմ որ լըրջօրէն խորհիք այդ ուխտերուն վրայ: Իրաւունք ունի՞ք թեթեօրէն վարուիլ այսքան սուրբ խնդրոյ մը հանդէպ: Ինքզինքնիդ ազա՞տ կ'զգաք ձեր վրայէն մէկդի նետել բեռ մը, որ վերջապէս օրհնութեանց բեռ մըն է: Աստուած տայ սիրելի երիտասարդներ որ ձեր պատասխանը Սամուէլի կեանքին նման կեանք մը ըլլայ: Այս երիտասարդը երբեք չհրաժարեցաւ իր մօրը ուխտէն եւ երբեք չզղջաց զայն կատարելուն:

Աննայի եւ ծերունի Հեղիի կարճ խօսակցութեան մէջ կը տեսնենք Հեղիի կողմէ խիստ եւ յանդուգն դատողութեան եւ Աննայի կողմէ համբերութեան օրինակ մը: Անարդար դատողութեան հանդէպ համբերելու այս առաքինութիւնն ալ կը տեսնենք յետագային Աննայի անդրանիկ որդւոյն վրայ: «Մեղմ պատասխանը ինչպէս որ սրտմըտութիւնը կ'իջեցնէ» (Առակ. ԺԵ. 1), կասկածն ալ կը փարատէ: Հեղի իր չարաչար սխալած ըլլալը ընդունելով իր աղօթքն ալ վշտացեալ կնոջ աղօթքին կը միացնէ եւ այսպէսով անոր սրտին յոյս կը դնէ:

* * *

Եղկանա եւ Աննա Ռամա վերադարձած են: Տարի մը անցած է: Տէրը Աննան յիշած է անոր տղայ մը տուած է: Ի՞նչ անունով կոչել այս մանուկը, եթէ ոչ անուն մը զոր իր ծնողեան պատճառ դարձած սրտաբուլի աղօթքները յիշեցնէ: Մայրը զայն Սամուէլ կոչեց, ինչ որ կը նշանակէ «Աստուծոյ լսածը»: Այն հիմա ի՞նչ ուրախութիւն տանը մէջ. ներքին ի՞նչ երջանկութիւն կը բռնէ հիմա անցեալի կուտակուած չարչան բանքներու, կուլ տուած արցունքներու տեղ, որոնք այնքան երկար ատեն այս կնոջ բաժինը եղած էին: Անիկա վերջապէս կրնայ ըսել, «Չաւակ»: Սիրելի պատանիներ, գիտէ՞ք թէ ի՞նչ խանդաղատանք եւ սէր կայ այդ բառին մէջ, երբ ձեր մայրը ձեզ «Չաւակ» կը կոչէ:

Բայց այսու, քանի այս պզտիկ Սամուէլը կը մեծնայ, իր մօրը երկինքին վրայ ալ ամպ մը կը մեծնայ: Նա ուխտ ըրած է զայն միշտ իրեն չպահել: Մանուկը Աստուծոյ կը պատկանի. անց-

նող իւրաքանչիւր օր մայրիկին համար իր մանկիկէն բաժնուելու օրը կը մօտեցնէ: Այո, բաժանում: Քանզի Աննա չի նմանիր այն հոգիներուն որոնք իրենց մէծ նեղութեան տունն շատ կը խոտաւանան Աստուծոյ, իսկ յետոյ երբ հանգստութեան եւ ազատութեան կ'ելլեն, կը ջանան իրենց Աստուծոյ խոտաւանէն կարելի եղած ամենաքիչ չափովը տալ Անոր: Չենք գիտեր այն պատճառարանութիւնները որ ինքզինքին կրնար ընել-կամ որ թերեւս ուրիշներ իրեն ըրին փաստելու համար թէ պէտք չէր իր ուխտը բառացիօրէն տոնել, թէ Աստուած իրմէ իր գաւազը չէր ուզեր, թէ Աստուած կը բաւականանար Աննայի «Խորհրդով» իր գաւազը Անոր նուիրելուն, թէ գաւազ մը Աստուծոյ ծառայութեան ընծայել չի նշանակեր զայն հայրենական տունէն հեռացնել, հապա միայն անոր լաւ կրօնական կրթութիւն մը տալ եւ ջանալ զայն իր ժամանակակից մարդոցմէն աւելի իմաստուն ընել: Աստուած շատ բարի է, չէ՞, շատ զիւրիս է Անոր «Խաթըր խօշ» ընել: Եւ նայէ Արքանամի պատմութեան: Աստուած չուզեց որ նա Իսահակը զոհ մատուցանէ: Աստուած բաւականացաւ տեսնելով թէ Արքանամ հնազանդելու յօժար էր. քեզի համար ալ նոյնը պիտի ըլլայ Աննա: Քու մանկիկիդ իր պզտիկ աղօթքները լաւ սորվեցուր: Իր մանուկ հասակին զայն Սելով Տէրօշը տար... բայց զայն նորէն ետ տունը բեր. ինքզինքիդ մի պարտադրեր այնպիսի պարտականութիւններ որոնք Աստուծոյ մտքէն չեն անցած քեզմէ պահանջելու: Ողջամիտ եղիր, չափազանցութեան մէջ մի իյնար:

Ողջամիտ: Կարծեմ թէ, բարեկամներս, այս կինը ողջամիտ եղաւ, որովհետեւ ամենաբարձր ողջամտութիւնը այն է որ մարդ «գլխատուած ծաղր» չընէ (Գաղ. 2. 7): Երեւակայեցէք հեղ մը թէ Սամուէլ իր մայրիկին որքան սիրելի կուգար այն օրը, երբ Աննա հասկցաւ թէ իր ուխտը կատարելու ժամը հասած էր: Նա այդ ուխտը երբեք չմոռցաւ: Սամուէլ կաթէ կտրուած է, Աննա իր սրտումը տուած է հաստատապէս: Անիկա անհաւատութիւնով տարակուսելով չտկարանար: Նա կ'ուզէ ընդհակառակը որ իր գաւազին տաճար նուիրումը ուրախութեան առիթ մը ըլլայ, առատ ողջակէզներով: Մտիկ ըրէք իր խոնարհ եւ յաղթական լսօտակցութիւնը Հեղիի հետ, «Ո՛հ Տէր իմ, քու անձդ կենդանի է, ես այն կրնն եմ որ հոս քու քովդ կայեցայ Տէրօշը աղօթք ընելու համար. ես այս տղուն համար աղօթք ըրի... անիկա իր բոլոր կեանքին մէջ Տէրօշը փոխ

տրուած ըլլայ»: Այսչափ չբաւեր, իր կեանքի այս վճռական ժամուն Աննա կ'աղօթէ, եւ իր աղօթքը այնքան բանաստեղծական է, խորհուրդներով եւ արտայայտութիւններով այնքան վերացած որ մարդիկ միշտ զայն «Աննայի երգը» կոչած են: Կարծես թէ անոր նման աղօթելու համար մարդ երգելու ալ է:

Աննա ուրախ էր, որովհետեւ կրցաւ տալ, եւ տալ իրեն ամենասիրելի եղածը: Լաց ու կոծ չի կայ, որովհետեւ անոր տալու չափը կէս չափ մը չէ: Անիկա իր մէկ ձեռքով տուածը միւս ձեռքով ետ չառներ: Այս վայրկեանէն սկսեալ անոր սիրտը երկուքի բաժնուած չէ, ահա թէ ինչո՞ւ նա կրնայ երգել: Անիկա իր մանկիկը Տէրօշը յանձնած է, ի՞նչ պաշտպանութիւն: Անկից յետոյ Տէրը պատտախանատու կը դառնայ այս աւանդին: Մայրը կը հրաժարի ամէն օր մանկիկը իր բազկաց մէջ սեղմելէ, բայց Աստուած կը խոտաւանայ զայն իր քաղուկներով շրջապատել: Այն փորձութիւնները որոնցմէ թերեւս իր մայրական սէրը պիտի չզիտնար զայն պահել, Աստուած է որ կ'ստանձնէ մանուկը այդ փորձութիւններէն ազատելու հոգը:

Օ՛հ, ի՞նչ ապահով ձեռքեր: Այսպիսի մօր մը տղան, այսպիսի Պաշտպանի մը վստահուած, նա պարտականութեան դաշտը ելլելու տունն «Աստուծոյ ապառազիւնութիւնովը գինուած պիտի ըլլայ» եփես. 2. 13: Աննա կրնայ խաղաղութեամբ Ռամա վերադառնալ: Մենք այլեւս զանիկա պիտի չտեսնենք, եթէ ոչ միայն մեր երեւակայութեան մէջ, տարին անգամ մը երբ ան կուգայ իր գաւազը այցելել: Ասկէ անդին անոր քաղցր եւ ազնիւ դէմքը կ'անյայտանայ պատմութենէն, բայց նա իր պարտականութիւնը կատարած է: Նա Սամուէլը իր Աստուծոյն յանձնած է: Իսկ Սամուէլ չ'անիծեր իր բաղդը, չգանգատիր անմայր մնացած ըլլալուն համար, սորված է թէ աւելի ապահով ձեռքի մը մէջ է ու Անոր քով ինքզինքը երջանիկ կ'ղգայ:

(Շար.)

.....

Զօրավար Պարֆիլտ, երբ դեռ մանուկ էր, հարցուեցաւ թէ ի՞նչ պիտի լինի երբ մեծնայ: Պատասխանեց թէ նախ քան զամենայն պիտի ջանամ լինիլ մարդ, եւ եթէ չյաջողիմ յայդմ, քաջ գիտեմ թէ բանի մը մէջ պիտի չյաջողիմ: